

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 6-18/1

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

ք. Երևան

«19» հունվարի 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Հայաստանի Հանրապետությունում արձանագրվող որոշ մանրէային, վիրուսային և մակարոնային բնույթի վարակների համաճարակաբանական օրինաչափությունների ուսումնասիրություն, շրջանառող հարուցիչների հափկությունների բնութագրում» (ենթաձրագիր 1), «Բնութագրել Երևան քաղաքի կենտրոն համայնքի առավել աղմկոտ փարածքներում շրջակա միջավայրի վրա ազդող աղմուկի մակարդակները» ենթաձրագիր 2** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 37 071 500 (Երեսուն յոթ միլիոն յոթանասուամեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական

ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 37 071 500 (երեսուն յոթ միլիոն յոթանասունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար

նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են.

9.2.1 Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտ,

9.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրություն (Հավելված 1),

9.2.3 Առաջադրանք (Հավելված 2),

9.2.4 Օրացուցային պլան (Հավելված 3),

9.2.5 Նախահաշիվ (Հավելված 4),

9.2.6 Տնտեսական և այլ ծախսեր (Հավելված 5),

9.2.7 Հաստիքացուցակ (Հավելված 6):

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
ք. Երևան, Օրբելի եղբայրերի 22
Հ/հ 900011033033

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Աշխատակազմի ղեկավար՝ **ԼԵՎՈՆ ՄԱՐԿՈՅԱՆ**

(ստորագրություն)
Կ. Տ.

ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան Մ.Հերացի 12
Հ/Հ 2471201669930000
Արդշինբանկ ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Գլխավոր տնօրեն **ԱՐՏԱՎԱԶԴ ԿԱՆՅԱՆ**



(ստորագրություն)
Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(Գայանե Մելիք-Անդրեասյան)
(անուն ազգանուն)

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Հայաստանի Հանրապետությունում արձանագրվող որոշ մանրէային, վիրուսային և մակաբուծային բնույթի վարակների համաճարակաբանական օրինաչափությունների ուսումնասիրություն, շրջանառող հարուցիչների հատկությունների բնութագրում»
ենթաձրագիր 1

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը՝ հանրապետությունում արձանագրվող որոշ անտրոպոնոզ և գոնոնոզ բնույթի վիրուսային, մանրէային, մակաբուծային ծագման որոշ նշանակալի ախտահարումների համաճարակային գործընթացի ինտենսիվությունը խթանող գործոնների պարզաբանում, հարուցիչների հատկությունների սահմանում, տարափոխիկ վարակների կենդանի փոխանցողների հետազոտում և բնութագրում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Վարակային գործոններով (մանրէային, վիրուսային և մակաբուծային բնույթի) պայմանավորված ախտաբանական երևույթները առ այսօր մարդու ախտաբանությունում դիտվում են բավականին հաճախ զարգացող դրսևորումների շարքում: Դրանով պայմանավորված վերջինների առաջացման, զարգացման օրինաչափությունների ուսումնասիրումը, կանխարգելումը խիստ արդիական է ինչպես ազգաբնակչության առողջության պահպանման, հաշմանդամության և մահածության իջեցման, այնպես էլ երկրի տնտեսական իրավիճակի բարելավման և անվտանգության պահպանության առումով:

Վերջերս իրավացի արմատացած «մեկ առողջություն» գաղափարն, որն ընդգրկում է մարդկանց, կենդանական աշխարհի առողջությունը և բնապահպանական գործոնները, բացում է նոր հեռանկարներ վարակների կանխարգելման և դրանց դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար: Ընդ որում, տվյալ մոտեցումը խիստ կարևորվում է վարակների համաճարակաբանական և պատճառագիտական օրինաչափությունների ուսումնասիրման ժամանակ, մասնավորապես գոնոնոզ վարակների դեպքում: Հարկ է նշել, որ գոնոնոզ և անտրոպոնոզ վարակիչ հիվանդությամբները, ախտահարելով բնակչության գրեթե բոլոր տարիքային խմբերը, կարևորվում են երեխաների և երիտասարդների, հաշմանդամության զարգացման և մահաբերության տեսանկյունից:

Հետազոտական մշտադիտարկումների արդիականությունը և կարևորությունը վարակների վերահսկման ոլորտում պայմանավորվում է հանրապետությունում, ինչպես և ամենուրեք, դեռևս առկա բազմաբնույթ պատճառներով, որոնք նպաստում են սննդային, ջրային, շփումա-կենցաղային, արյունա-շփումային բնույթի վիրուսային, մանրէային, մակաբուծային ծագում ունեցող անտրոպոնոզ և գոնոնոզ վարակների առաջացմանը և տարածմանը: Մեր բնակչության բավականին ակտիվ տեղաշարժերի արդյունքում առկա է տարածաշրջան նոր

հարուցիչների հնարավոր ներհուսքի վտանգ, այդ թվում, ողջ աշխարհում կենսասահաբեկչության սպառնալիքի պայմաններում բարձր ախտածնություն ունեցող մանրէների և վիրուսների: Այդ ամենը կարող է բերել մեզ համար ոչ բնորոշ „նոր“, կամ նախկինում տարածված վարակիչ հիվանդությունների զարգացմանը, մասնավորապես կապված ազգաբնակչության իմունիտետի բացակայության հետ: Բացի այդ, տարբեր գործոնների ազդեցության արդյունքում հարուցիչների կենսաբանական հատկությունների փոփոխությունները կարող են հանգեցնել վերջինների ձևափոխված տարբերակների առաջացմանը: Հարուցիչների առաջացած տարբերակների մոտ հնարավոր է ախտածնության աստիճանի աճ, դեղորայքների և ախտահանիչ միջոցների նկատմամբ կայունության զարգացում: Ընդ որում, այդպիսի տարբերակներով հարուցված վարակները առավել ծանր են ընթանում, դժվար է նրանց բուժումը և կանխարգելումը: Մանրէների դեղորայքակայուն շտամները, հարուցելով տարբեր բնույթի վարակներ (սննդային, ջրային, օդային, շփման եղանակով փոխանցվող) և այլն, առավելապես կարևորվում են որպես ներհիվանդանոցային (հոսպիտալային) վարակների ծագումնաբանական գործոն: Այս առումով, խիստ կարևորվում են սովյալ երկրում վարակների հարուցիչների տեսակավորման (պարզաբանման) աշխատանքները:

Մեր տարածաշրջանում կան բազմաթիվ նպաստավոր պայմաններ, այսօր ամբողջ աշխարհում բավականին կարևորվող կենդանի փոխանցողների միջոցով տարածվող վարակների զարգացման համար: Այն է՝ Հայաստանի լանդշաֆտի յուրահատկությունը, տարբեր կլիմա-աշխարհագրական գոտիների առկայությունը, արյունածուծ հողվածոտանիների և նրանց տերերի բազմազանությունը և մեծաքանակությունը:

Համաճարակաբանական իրավիճակի առավելագույնս նորմալացման և հսկման, հիվանդությունների զարգացմանը նպաստող բոլոր գործոնների վրա արդյունավետ ազդելու, ինչպես նաև վարակների տարաբնույթ հարուցիչների շրջանառությունը նվազագույնի հասցնելու համար, անհրաժեշտ է վարակների համաճարակաբանական գործընթացների երկարաժամկետ շարունակական հետազոտությունների ընդլայնում, ինչը հնարավորություն կընձեռնի վերջինների համաճարակաբանական հսկողության համակարգի մշտական վերահսկման և պարբերական կատարելագործման համար, ունենալով մեծ նշանակություն վարակների կանխարգելման և դրանց դեմ պայքարի կազմակերպման գործընթացում: Վարակների առաջացման և տարածման ռիսկերի նվազեցումը կարևոր նախադրյալ է՝ հանրային առողջության պահպանման, երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և պաշտպանունակության բարձր մակարդակի ապահովման համար:

Հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են գիտական հոդվածների, թեզիսների, գիտաժողովներում զեկուցումների, հանրային առողջության ոլորտի մեթոդական, ուսումնա-մեթոդական նորմատիվային փաստաթղթերում, տարեկան հաշվետվության ձևով, ինչպես նաև ընդգրկվելու են կառավարության որոշումներում, ՀՀ ԱՆ հրամաններում, սանիտրական նորմերում և կանոններում:

4. Աշխատանքի բովանդակությունը:

Իրականացվող շարունակական հետազոտությունների ուղղվածությունը համահունչ է ՀՀ 2018-2020 թվականների պետական բյուջեի ծախսերի գիտության (2018 թվականից սկսած գիտական ֆինանսավորման ծավալների հիմնական մասի ուղղորդում դեպի կիրառական ծրագրեր) և առողջապահության (կանխարգելիչ բժշկության համակարգի շարունակական զարգացում) ոլորտի գերակայությունների: Վարակների առաջացման պատճառների և զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը, ներկայացնելով կիրառական հետազոտությունների ծրագիր խիստ կարևորվում է բժշկագիտության և առողջապահության համար, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում կանխարգելիչ բժշկության շարունակական զարգացման շրջանակներում, ստեղծելով գիտական հիմքեր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ռազմավարական ծրագրերի մշակման համար:

Ներկայացված նախագիծը, հանդիսանալով շարունակական ծրագրերի մաս, ուղղված է ՀՀ-ում արձանագրվող մանրէային, վիրուսային և մակաբուծային բնույթի զոոնոզ և անտրոպոնոզ վարակների համաճարակաբանության, ախտորոշման և կանխարգելման, ինչպես նաև այդ հիվանդությունների դեմ պայքարի հարցերի ուսումնասիրությանը: Ծրագրի գիտական հետազոտությունների իրականացման ընթացքում օգտագործվելու են վարակների համաճարակաբանական գործընթացի ուսումնասիրման ժամանակակից միջազգային չափանիշներ և բնութագրիչներ: Վարակների ախտորոշումը, հարուցիչների հատկությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև ազգաբնակչության իմունային կառուցվածքի պարզաբանումը կատարվելու է ժամանակակից մանրէաբանական, վիրուսաբանական, մակաբուծաբանական, իմունաբանական, միջատաբանական, վիճակագրական մեթոդներով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- Իրականացնել հանրապետության որոշ մարզերից տարբեր բնույթի հիվանդներից ստացված կենսաբանական նյութից անջատված մանրէային կուլտուրաների նույնականացում, հաստատում/վերահաստատում:

- Իրականացնել անջատված մանրէային կուլտուրաների զգայունության որոշում հակամիկրոբային դեղամիջոցների նկատմամբ:

- Իրականացնել աջատված մանրէների հակամիկրոբային դեղամիջոցների հանդեպ կայունության զարգացման մեխանիզմների որոշում:

- Հակամիկրոբային դեղամիջոցների հանդեպ մանրէների կայուն կուլտուրաների վերաբերյալ տվյալների բազայի մշակում՝ տարբեր տարածքների հետագա քարտեզագրման նպատակով:

- Լիստերիոզի հայտնաբերման նպատակով իրականացնել մշտադիտարկում հղիների և վաղ ծննդաբերած և հղիության կրելախախտ ունեցող կանաց շրջանում՝ ՊՇՌ-մեթոդով:

- Հելիկոփակտերների դերը ստամոքսա-աղիքային տրակտի ախտահանումների զարգացման գործընթացում պարզաբանման նպատակով, իրականացնել հելիկոփակտեր պիլորիի ԴՆԹ-ի հայտնաբերում կենսաբանական նյութի նմուշներում

- Պարզաբանել պարենտերալ վիրուսային հեպատիտների համաճարակային գործընթացի զարգացումը պայմանավորող հիմնական գործոնները: Ուսումնասիրել պարենտերալ վիրուսային հեպատիտների հարուցիչների հատկությունները:

- Պարզաբանել վիրուսային հեպատիտների համաճարակային գործընթացի զարգացումը պայմանավորող հիմնական գործոնները:

- Իրականացնել հետազոտություններ պարենտերալ վիրուսային հեպատիտների դրոշմների հանդեպ:

- Իրականացնել բնակչության շրջանում էխինակոկոզի համաճարակային գործընթացի բնութագրում, հիվանդացության տվյալների վերլուծություն:

- Էխինակոկոզի իրական տարածվածության և վաղ հայնաբերման նպատակով կատարել սկրինինգային շճաբանական հետազոտություններ էխինակոկոզի վերաբերյալ

- Իրականացնել էխինակոկոզի վերաբերյալ բնակչության իրազեկվածության գնահատումում, կատարել իրազեկվածության բարձրացման ուսուցում:

- Միջատաբանական մշտադիտարկման շրջանակներում հանրապետության տարբեր կլիմա-աշխարհագրական գոտիներում իրականացնել արյունածուծ հողվածոտանիների /մոծակներ, տզեր, մլակներ/ հավաքում, տեսակավորում և նույնականացում:

- Կատարել վեկտորների տարածվածության քարտեզագրում:

- Իրականացնել լեյշմանիոզի հիվանդացության վերլուծություն:

- Լեյշմանիոզի դեպքեր արձանագրված բնակավայրերում իրականացնել ռիսկի խմբերի հետազոտություն, դեպքերի վաղ հայտնաբերում:

Գիտական կենտրոնում առկա են բարձրորակ գիտական կադրեր և նյութական բազա գիտական հետազոտությունները ներկայացված ուղղություններով իրականացման համար:

Ստացված արդյունքների հիման վրա բնութագրվելու են ներկա պայմաններում Հայաստանի Հանրապետությունում վիրուսային, մանրէային և մակաբուծային ծագման անտրոպոնոզ և զոոնոզ որոշ վարակների համաճարակաբանական գործընթացի օրինաչափությունները, առանձնացնելով վերջինների առաջացմանը և տարածմանը նպաստող առավել նշանակալի գործոնները , հարուցիչների կարևոր կենսաբանական հատկությունները և շրջանառության առանձնահատկությունները: Այդ ամենը կնպաստի վարակների կանխարգելման և նրանց դեմ պայքարի միջոցառումների ուղղվածության բարելավման և արդյունավետության բարձրացմանը, ինչը կարևոր է համաճարակաբանական իրավիճակի կայունացման, բնակչության հիվանդացության իջեցման համար:

ԱՋԱԴՐԱՆՔ

«Բնութագրել Երևան քաղաքի կենտրոն համայնքի առավել աղմկոտ փարածքներում շրջակա միջավայրի վրա ազդող աղմուկի մակարդակները » ենթաձրագիր 2

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը՝ աղմուկի քարտեզների ստեղծման նպատակով հավաքագրել և մշակել տվյալների բազա:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Աղմուկը 21-րդ դարի մարտահրավերներից է: Աղմուկը համարվում է շրջակա միջավայրի վնասակար աղտոտման կարևորագույն գործոններից մեկը, այն ոչ պակաս վտանգավոր է քան օդի և ջրի աղտոտումը: Մարդուն աղմուկից պաշտպանելու համար անհրաժեշտ է գիտելիք, փորձ, նորագույն տեխնիկական լուծումներ և նյութեր: Աղմուկի աղբյուրները բազմազան են և դրանցից յուրաքանչյուրի լուծումը պահանջում է անհատական մոտեցում: Աղմուկի առաջացման հիմնական պատճառներն են տրանսպորտային հոսքերը, օդափոխման և ջեռուցման ժամանակակից համակարգերը, կենցաղային նորագույն տեխնոլոգիաները և այլ բազմազան ինժինեռատեխնիկական սարքավորումներ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն աղմուկը, շրջակա միջավայրում տարեկան աճելով միջինը 0,5 դեցիբելով, ներկայումս հասել է այնպիսի մակարդակի, որ անհանգստացնում է քաղաքացիների /բնակիչների/ անդորրն ամենուր: Բնապահպանական ակուստիկայի փարձագետները կանխատեսում են, որ աղմուկի աճը կշարունակվի նաև մոտակա 30 տարվա ընթացքում:

Ուսումնասիրելով համաշխարհային խնդիրները աղմուկի վերաբերյալ, մասնագետների պնդմամբ ներկայումս ողջ աշխարհում, ինչպես նաև Երևան քաղաքում գրանցվում են աղմուկի այնպիսի մակարդակներ, որոնք պետք է գրանցվեին 2030-2035թթ: Աղմուկի խոշոր աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտային հոսքերը, ժամանցի կենտրոնները /ոեստորաններ, գիշերային ակումբներ, կարաոկե, բառ, սրճարան և այլն/, որոնք տեղակայվում են բնակելի տարածքներին շատ մոտ կամ բնակելի շենքերի առաջին և նկուղային հարկերում:

Գործող սանիտարական նորմերով սահմանված ձայնային ճնշման թույլատրելի մակարդակների գերազանցումը պատճառ է հանդիսանում ազգաբնակչության հիվանդացության աճի: Վերջին տարիներին ազգաբնակչության կողմից աղմուկի վերաբերյալ բողոքների թվի կտրուկ աճն ակնհայտ ցույց է տալիս, որ խնդիրը առկա է և պետք է գտնել պատճառը և տալ լուծում:

4. Աշխատանքի բովանդակությունը:

2013թ. կատարած սոցիոլոգիական հարցման արդյունքում, որին մասնակցել է Երևանի թվով 986 բնակիչ, պարզվեց, որ նրանցից 904-ը, այսինքն 92%, համարում են, որ զրկված են լռության իրավունքից՝ աղմուկը հետապնդում է նրանց ամենուրեք՝ փողոցում, քաղաքի հանգստի գոտիներում, հասարակական վայրերում և նույնիսկ բնակարանում: Կատարած սոցիոլոգիական հարցումը ցույց տվեց, որ ակուստիկ ծանր պայմաններ են հատկապես Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում, քանի որ շարունակվում են արագընթաց մայրուղիների, բնակելի թաղամասերի և նոր շենքերի կառուցումները առանց աղմուկի քարտեզի, որն կընձեռներ հնարավորություն հստակ պատկերացնել տվյալ տարածքի աղմուկի մակարդակը: Այս ամենի համար պատճառ է հանդիսանում Երևանի խիտ բնակեցվածությունը, նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը կենցաղում և այլուր: Շինարարական աշխատանքների ծավալի աճը հանգեցրել է նրան, որը շրջակա միջավայրում աղմուկի մակարդակը գերազանցում է թույլատրելի մակարդակը 25-30 դեցիբելով:

Հայտնի է, որ աղմուկի դեմ պայքարի հիմնական միջոցներից է համընդհանուր ճանաչում ստացած, այսպես կոչված աղմուկի քարտեզների մշակումը, ինչը մի շարք զարգացած երկրներում իրականացվում է պարբերաբար, յուրաքանչյուր 5 տարին մեկ և հնարավորություն է տալիս ոչ միայն գրանցել աղմուկի մակարդակները շրջակա միջավայրում, նաև հայտնաբերել աղբյուրները, մշակել աղմուկի դեմ պայքարի ուղիներ՝ ճարտարապետաշինարարական, ինժեներատեխնիկական քաղաքաշինական, վարչակազմակերպչական և այլ ուղիներով: Վերջին անգամ Երևան քաղաքի աղմուկը քարտեզագրվել է 1976թ.:

Հայաստանի Հանրապետության քաղաքներից ոչ մեկը չունի աղմուկի քարտեզ, աղմուկի դեմ պայքարի միջազգային փորձն անտեսված է, աղմուկից պաշտպանվելու նախագծային ճարտարապետաշինարարական, կոնստրուկտորական մեթոդների լայն զինանոցը, որով հարուստ է ժամանակակից քաղաքաշինական ակուստիկան, չի օգտագործվում:

Ստեղծված իրավիճակը շտկելու նպատակով խիստ կարևոր է անհապաղ ձևավորել և հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքներում աղմուկի դեմ պայքարի ծրագիր՝ վերջինիս վերապահելով պետական նշանակության կարգավիճակ:

Տվյալ ծրագրի իրականացման շրջանակներում անհրաժեշտ է ստեղծել աղմուկի քարտեզներ, որոնք հստակ պատկերացում կտան բնակավայրերում աղմուկի մակարդակի վերաբերյալ: Աղմուկի քարտեզը տալիս է հետևյալ հնարավորությունները՝

- Տարածքի գնահատում ճարտարապետական ակուստիկայի տեսանկյունից,
- Առողջապահական կենտրոնների, մանկապարտեզների և այլ հաստատությունների շրջակայքում աղմուկի վերաբերյալ տեղեկատվություն,
- Քաղաքի վարչական շրջանների աղմուկի մակարդակի վերաբերյալ տեղեկատվություն,
- Աղմուկի առավել ոչ բարենպաստ գոտիների հայտնաբերում,
- Նորակառույց շենքերի տեղակայման վայրի որոշում ակուստիկ տեսանկյունից
- Տրանսպորտային հոսքերի ճիշտ կառավարում քաղաքի շրջաններում
- Աղմուկի դեմ պայքարի միջոցառումների իրականացում,

Հիմնական քայլեր

- Ուսումնասիրել միջազգային փորձը

- Ուսումնասիրել քաղաքի առավել ադմկոտ հատվածները՝ արդյունաբերական հանգույցները, առավել ծանրաբեռնված փողոցները, ժամանցի վայրերը /ռեստորաններ, գիշերային ակումբներ և այլն/:

- Չափումներ իրականացնել նախապես ընտրված կետերում

Առանձնահատուկ հաշվի առնել Երևան քաղաքի ռելիեֆը, մասնավորապես՝ ձորերում տեղակայված ադմուկի աղբյուրները /ռեստորաններ, ժամանցի վայրեր և այլ/, որոնց միջոցով ադմուկը տեղափոխվում է Երևան քաղաքի այլ շրջաններ ավելի մեծ ուժգնությամբ:

Ըստ հավաքագրված տվյալների նախատեսվում է ծրագրի շարունակական իրականացումը: Առավել բարձր ադմուկի մակարդակներ գրանցվել են Երևանում հատկապես՝ կենտրոն համայնքում այդ պատճառով առաջարկվում է ծրագիրը սկսել Երևանի կենտրոն համայնքում, այնուհետև ընդգրկել Երևանի մյուս համայնքները: Նախատեսված է Երևան քաղաքում կատարել թվով 4000 ռեպերային չափում՝ համաձայն գործող միջազգային ստանդարտների, այնուհետև տվյալների հավաքագրում և ուսումնասիրում, որից հետո մասնագիտացված համակարգչային ծրագրի կիրառմամբ կստեղծվի Երևան քաղաքի ակուստիկ տարածքների դասակարգումը, ինչը թույլ կտա հստակ տարբերել ըստ գույների՝

1. Կտրուկ արտահայտված դիսկոմֆորտ
2. Միջին արտահայտված դիսկոմֆորտ
3. Համապատասխանություն նորմատիվ ստանդարտներին

Ակնկալվող արդյունքներ

Մշակված քարտեզները կներկայացվի համապատասխան լիազոր մարմիններին, որոնք կօժանդակեն ադմուկի նվազեցման ուղղությամբ իրականացնել առավել նպատակային և արդյունավետ միջոցառումներ առողջության պահպանման համար: Ծրագրի իրականացումը, բացի կարևորագույն առողջապահական, էկոլոգիական և քաղաքաշինական հիմնահարց լինելուց, կարժանանա մեծ հասարակական արձագանքի իբրև լուրջ ներդրում բնակչության առողջության և կենսամակարդակի բարձացման գործում:

Ծրագիրը կնպաստի հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, բնակչության համար անվտանգ միջավայր ստեղծելու համար:

